EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

06 մարտի, 2012թ.

Մամլո հաղորդագրություն
Press release

Սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում Հայաստանում

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը 2012թ. հուլիսի 9-ից օգոստոսի 7-ը իրականացնում է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստման ծրագիր: Այն նախատեսված է բոլոր ուսումնական օղակների ուսուցիչների, ինչպես նաև կրթօջախների պատասխանատուների/տեսուչների համար:

Ծրագրի իրականացման, ներառյալ՝ կեցության և սննդի ծախսերը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը:

Ճանապարհածախսը հոգում են իրենք՝ մասնակիցները կամ նրանց գործուղած կրթօջախներն ու կազմակերպությունները:

Խնդրում ենք ծանոթանալ առդիր ամբողջական հայտարարությանը և մասնակցության հայտին:

Առդիր՝ 3 էջ:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613.234.3710 Fax: 613.234.3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակում է արտասահմանյան երկրներում գործող հայկական վարժարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, միօրյա և այլ տիպի կրթօջախներում դասավանդող հայագիտական առարկաների ուսուցիչներին, տնօրեններին/ուսումնական մասի տեսուչներին՝ վերապատրաստման ծրագիրը:

Վերապատրաստումն ընթանալու է Հայաստանում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարբերակված հետևյալ 6 մեկամսյա ծրագրերով.

- Ուսուցում մանկապարտեզում
- Ուսուցում կիրակնօրյա դպրոցում
- Տարրական ուսուցում
- Հայոց լեզվի և գրականության դասավանդումը միջին և ավագ դպրոցում
- Դպրոցների կառավարում
- Լրացուցիչ կրթության և արտադասարանային դաստիարակության կազմակերպում

Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվեն համապատասխան վկայագրեր, ինչպես նաև ուսումնամեթոդական գրականություն, դասագրքեր և այլ նյութեր:

Ծրագրի ընթացքում դասընթացների կազմակերպման, ուսուցիչների կեցության և շրջագայության ծախսերը, ծրագրի բացման օրվանից մինչև փակման օրը, ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը, ներառյալ օդանավակայանից մինչև հյուրատունը, և Հայաստան մուտքի արտոնագրի /մուտքի վիզա/ ծախսերը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Հայաստան մուտքի օրը համարվում է ծրագրի մեկնարկային օրը՝ հուլիսի 9-ն է: Այն հյուրատան հասցեն, ուր պետք է ժամանեն մասնակիցները կփոխանցվի լրացուցիչ:

Ծրագրի ժամանակացույցը հետևյալն է.

8 հուլիսի՝	հյուրատուն մուտքի և տեղավորման օր
9 հուլիսի՝	դասընթացների բացում
7 օգոստոսի՝	հյուրատանից ելքի օր:

Մասնակիցներին կընձեռնվի հնարավորություն նույն հյուրատանը մնալու ՀՀ կրթության և գիտության նախարարության համար սահմանված զեղչված գներով՝ հուլիսի 8-ից ավելի վաղ ժամանելու և օգոստոսի 7-ից ավելի ուշ մեկնելու պարագայում:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **<u>հունիսի 4-ը</u>** ներառյալ ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել.

1. Ուսուցչի կողմից լրացված և կրթօջախի տնօրինության կողմից վավերացված հայտը /հայտաձևը կցվում է/,
2. Համայնքի, հաստատության կամ կազմակերպության կողմից տրված գործուղման տեղեկանք:

Մասնակցելու նախապատվությունը տրվելու է Հայաստան առաջին անգամ ժամանող և վերջին երեք տարիներին վերապատրաստում չանցած ուսուցիչներին: Մասնակցության պաշտոնական հաստատումները ուսուցիչները կստանան իրենց էլեկտրոնային հասցեով հունիսի 4-ից 18-ը ընկած ժամանակահատվածում: Պաշտոնական հրավեր նամակի անհրաժեշտության դեպքում՝ խնդրում ենք զգուշացնել նախապես:

Ծրագրերի ընդհանուր նկարագիրը և հիմնական դասախոսների ցանկը կփոխանցվեն մասնակցության հայտ ներկայացրած ուսուցիչներին հունիս ամսվա ընթացքում: Բոլոր խմբերի ուսումնական ծրագրերում ներառվելու են.

- մանկավարժություն
- հոգեբանություն
- հիմնական առարկաներ
- կամընտրական առարկաներ

Մասնակիցների համար նախատեսվում են նաև հանդիպումներ, ճանաչողական-ուսուցողական շրջայցեր և մշակութային ծրագիր:

Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ կրթության և գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնից.

Հեռ. 374 10 58-13-91

Ֆաքս. 374 10 52-52-07

Էլ. փոստ. spyurq@yahoo.com կամ info@edu.am

Առդիր՝ մասնակցության հայտաձևը /1 էջ/:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ-2012

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

1. Անուն_____ 2. Ազգանուն _____

3. Երկիր _____ 4. Քաղաք _____

5. Դպրոցի անվանում _____

_____

6. Կապի տվյալներ.

   Ձեր հեռախոսահամարը._____

   E-mail (պարտադիր է)_____

7. Ի՞նչ մասնագիտություն ունեք _____

8. Քանի՞ տարվա ուսուցչական փորձ ունեք. _____

9. Քանի՞ տարվա ղեկավարման փորձ ունեք /ղեկավարների համար/. _____

10. Ո՞ր օղակում կամ ո՞ր դասարաններում եք դասավանդում կամ ղեկավարում /նշեք նաև երեխաների տարիքը /_____

11. Ի՞նչ առարկա(ներ) եք դասավանդում.

    _____ _____

    _____ _____

12. Նախկինում մասնակցե±լ եք, արդյոք, վերապատրաստման դասընթացների: Եթե այո, ապա նշեք՝ երբ և որտեղ. _____

    _____

13. Ի՞նչ ծրագրով կցանկանայիք վերապատրաստվել /նշեք միայն մեկը/.

    Ա. Մանկապարտեզ
    Բ. Մեկօրյա դպրոց
    Գ. Տարրական ուսուցում
    Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում
    Ե. Դպրոցների կառավարում
    Ժ. Լրացուցիչ կրթության կազմակերպում

14. Ունե՞ք հյուրատան կարիք Երևանում.

    Այո ☐ Ոչ, Երևանում մնալու տեղ ունեմ ☐

Դպրոցի տնօրենի կամ կազմակերպության ղեկավարի ստորագրություն, կնիք

_____